ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N«ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-19/9»

ք. Դիլիջան «18» 07. 2019թ.

Դիլիջանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Արմեն Սանթրոսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ,,Ռ. Հովհաննիսյան,, ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռուբեն Հովհանիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **«Դիլիջան համայնքի «Թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և «Թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ»-ի վերանորոգում»** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանք ի-ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվումեն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 01.11.2019թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթեր իպահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպեսնաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 ՄինչևՊատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննելևընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համարհամապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարմանենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետումն շված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում հիայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարմանա պահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթացս կսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. . ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **48828000** (քառասունութ միլիոն ութ հարյուր քսանութ հազար) ՀՀդրամ, որից **8138000** (ութ միլիոն հարյուր երեսունութ հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդորում՝

1-ին չափաբաժին **24474000** (քսանչորս միլիոն չորս հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ՝ որից **4079000** (չորս միլիոն յոթանասունինը հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

2-րդ չափաբաժին **24354000** (քսանչորս միլիոն երեք հարյուր հիսունչորս հազար) ՀՀ դրամ՝ որից **4059000** (չորս միլիոն հիսունինը հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն :

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[33] .

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ -ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելո ւդեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպեսնաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[34] : Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվումեն Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտմանհամար Պատվիրատուի նկատմամբ ուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգհարյուր երրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերնիրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչպատշաճկ ատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքներիվ ճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

---

[33] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

[34] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն նհայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[35] :

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարե լայլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության ՀայաստանիՀանրապետությա նդատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Դիլիջանի համայնքապետարան	,,Ռ. Հովհաննիսյան,, ՍՊԸ
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55	ք.ՎանաձորԿ.Դեմիրճյան 1գ
ՀՎՀՀ 07618909	Հ/Հ 2050222083701001
ՀՀ 900402081013	ՀՎՀՀ 06940332
ՀՀ ֆինանսների նախարարության	«Ինեկոբանկ,Վանաձորմ/ճ
Գործառնական վարչություն	
Համայնքի ղեկավար՝ Ա. Սանթրոսյան	Տնօրեն՝ Ռ. Հովհանիսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
« 18 » 07 2019թ. կնքված
ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-19/9 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի թիվ 1 մանկապարտեզի վերանորոգման

հ/հ	Անվանումը	Չափման միավոր	Քանակը	Միավորի գինը	Արժեքը
				Հազ.դրամ	
1	2	3	4	5	6
	1,Քանդման աշխատանքներ				
1	Տանիքի ծածկի քանդում ասբոշիֆերից	100 մ2	0,78	14,780	11,528
2	Ջրհորդանի քանդում մետաղական թիթեղից	100 մ2	0,21	7,217	1,516
3	Ջրհորդանի փայտանյութի քանդում	մ3	0,65	11,418	7,422
4	Շին.աղբի բարձում ինքնաթին.	տն	0,95	0,341	0,324
5	Շին.աղբի Տեղափոխում 5 կմ	տն	0,95	1,187	1,127
6	Փայտե պատուհանների քանդում /պատուհանագոգերի հետ միասին/	100 մ2	2,106	149,425	314,689
7	Փայտե դռների քանդում	100 մ2	0,548	87,146	47,756
8	Պատերի փայտե վահանների քանդում	100 մ2	0,48	30,317	14,552
9	Պատի և առաստաղի մաքրում հին ներկից /յուղաներկ և սոսնձաներկ/	100 մ2	20,68	11,714	242,254
10	Կերամիկական սալիկ.հատակ.քանդում	100 մ2	0,955	31,931	30,495
11	Ց/ավազային հարթեցուցիչ շերտի քանդում	100 մ2	0,955	26,732	25,529
12	Շին.աղբի,հավաքում,տեղափոխում և բարձում ինքնաթին.	տն	16	0,341	5,457
13	Շին.աղբի Տեղափոխում 5կմ	տն	16	1,187	18,985
	2,Տանիք				
1	Ջրհորդանի կառուցում ցինկապատ թիթեղից	100մ	0,224	475,438	106,498
2	Տախտակ ջրհորդանի	մ3	1	118,949	118,949
3	Պրոֆիլավոր ցինկապատ թիթեղ 0,5 մմ հաստ ԿՊ -21-- 0,5 մմ	100 մ2	0,78	280,062	218,449
4	Ինքնաշաղաթող հեղյուս	հատ	468	0,017	7,859
5	Տանիքի թիթեղների վերանորոգում	մ2	38	3,353	127,432
6	Ջրթափ խողովակ D = 140մմ	մ	24	1,567	37,602
7	Ջագար D = 140մմ	հատ	8	2,477	19,815
8	Ծունկեր D = 140մմ	հատ	8	0,940	7,523
	3,Բացվածքներ				
1	Ալյումինե դռան տեղադրում 60 մմ հաստ (օտարերկրյա. պրոֆիլ, սպիտակ գույն) թերմոկամուրջով	մ2	11,95	56,163	671,142
2	Մետաղապլաստե դռան տեղադրում 60 մմ հաստ (հայկ. պրոֆիլ, սպիտակ գ		42,9	27,055	1160,651
3	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում /բացվող/ (հայկ.պրոֆիլ,սպիտակ) 60 մմ հաստ4+4 մմ	մ2	114,5	20,292	2323,379
4	Մետաղապլաստե պատուհանների տեղադ- րում /չբացվող/ (հայկ.պրոֆիլ,սպիտակ) 60 մմ հաստ4+4 մմ	մ2	96,14	13,294	1278,083
5	Մետաղապլաստե պատուհանագոգերի տեղադրում	մ2	31,89	2,204	70,301
6	Մետաղապլաստե պատուհանագոգերի արժեք /30սմ լայնութ./	գմ	106,3	2,169	230,542
	4,Միջնորմներ				
1	Միջնորմների կառուցում 10 սմ հաստ.պեմզաբլոկից	մ3	5,8	19,168	111,177
2	Միջնորմների ամրանավորում Ա-1	տն	0,0638	296,669	18,927
2	պեմզաբլոկի անցքերի լիցք թեթև բետոն Բ - 7.5	մ3	0,75	23,385	17,539
4	Ե/բ միաձույլ բարավորի կառուցում Վ-15 բետոնից	մ3	0,096	53,445	5,131
5	Ամրան Ա-1	տն	0,0019	296,672	0,558
6	Ամրան Ա-3 -12 մմ	տն	0,0083	290,841	2,414
7	Պատերի շարվածք քրքատաշ բազալտե քարով /առանց քարի արժեքի/	մ2	3,6	6,555	23,598
	5,Հարդարման աշխատանքներ /առաջին հարկ/				
1	Կախովի առաստաղի իրականացում հիմնակմախքով,պլաստմասե /գունավոր /մետաղական պրոֆիլների վրա	մ2	2,6	2,478	6,444
2	Պատի գաջի սվաղի նորոգում բարելաված որակի մինչև 10 մ քառ	100 մ2	3,559	175,017	622,885
3	Պատերի սվաղում գաջի շաղախով բարելավված որակի	100 մ2	0,652	153,962	100,383
4	Առաստաղի գաջի սվաղի նորոգում բարելաված որակի մինչև 10 մ քառ	100 մ2	1,842	292,729	539,208
5	Առաստաղների ներկում լատեքսով բարելաված որակի	100 մ2	6,365	83,819	533,510
6	Շեպերի սվաղում գաջի շաղախով	100 մ2	1,188	374,842	445,313
7	Պատերի և շեպերի յուղաներկում	100 մ2	8,188	77,659	635,875
8	Պատերի ներկում լատեքսով բարելաված որակի	100 մ2	6,54	74,467	487,013
	6,Հարդարման աշխատանքներ /երկրորդ հարկ/				
1	Պատի գաջի սվաղի նորոգում բարելաված որակի մինչև 10 մ քառ	100 մ2	0,965	175,017	168,891
2	Պատերի սվաղում գաջի շաղախով բարելավված որակի	100 մ2	0,652	153,962	100,383
3	Առաստաղի գաջի սվաղի նորոգում բարելաված որակի մինչև 10 մ քառ	100 մ2	0,632	292,729	185,005

	Առաստաղների ներկում լատեքսով բարելաված որակի	100 մ2	2,513	83,819	210,638
	Շեպերի սվաղում գաջի շաղախով	100 մ2	0,502	374,842	188,171
6	Պատերի և շեպերի յուղաներկում	100 մ2	3,208	77,659	249,131
7	Պատերի ներկում լատեքսով բարելաված որակի	100 մ2	2,552	74,467	190,039
8	Արտաքին պատուհանագոգերի արցունքաթափի տակ ց/ավազային սվաղ	100մ	1,063	42,900	45,602
9	Պատուհանագոգերի ծածկ ցինկապատ թիթեղից 0,55 մմ	100 մ2	0,213	251,178	53,501
10	մետաղական բազրիքների ապամոնտաժում	100մ	0,1	91,285	9,128
11	Ալյումինե բազրիքների կառուցում 3 ձողով	100մ	0,1	1423,41	142,341
	7,Հատակներ				
1	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ.	100 մ2	0,959	84,715	81,242
2	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 20մմ հաստ	100 մ2	0,037	61,063	2,259
3	Ջրամեկուսիչ շերտի իրականացումCR-68	մ2	3,7	4,302	15,918
4	Կերամիկական հատակների կառուցում	100 մ2	0,037	407,035	15,060
5	Լամինատե հատակների կառուցում - 8մմ արտասահմանյան, սպունգով, շրիշակով	մ2	580	3,310	1919,969
6	Հատակների կառուցում սալիկներից /Պրեսգրանիտե սալ /400*400/սոսինձ-	100 մ2	0,922	713,980	658,289
7	Մանրատախտակե հատակների վերանորոգում	մ2	145	7,705	1117,242
8	Պրեսգրանիտե շրիշակների կառուցում H=10սմ սոսինձի վրա	100 մ2	0,082	752,153	61,677
	8.Սալվածք				
1	Բնահողի տոփանում խճով 15-20 մմ	100 մ2	2,36	20,954	49,452
2	Բետոնե սալվածք 100մմ հաստությամբ	մ3	23,6	23,385	551,880
3	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ.	100 մ2	2,36	84,715	199,927
4	Բետոնե հավաքովի եզրաքարերի տեղադրում 200*80	մ	236	2,557	603,480
	9.Ջրագծի ներքին տեղամաս				
1	Լվացարանների ապամոնտաժում	100հտ	0,14	36,676	5,135
2	Զուգարանակոնքերի ապամոնտաժում	100հտ	0,21	45,375	9,529
3	Մանկական լվացարանի տեղադրում	կ-տ	14	12,246	171,438
4	Մանկական զուգարանակոնքի տեղադրում	կ-տ	21	43,338	910,088
5	էլջրատաքացուցիչի տեղադրում/50լ/	հատ	2	39,900	79,801
6	էլջրատաքացուցիչի տեղադրում/80լ/	հատ	2	53,335	106,669
7	Պոլիպրոպիլենային խողով..d=20 մմPN10 /տաք ջուր/	մ	48	2,110	101,261
8	Լվացարանի խառնիչի տեղադրում d=15մմ	հատ	14	4,634	64,878
9	Գազի կաթսայի ծխատար խողովակ ջերմամեկուսացված - 3,0 մ	հատ	1	10,491	10,491
	10.Ներքին լուսավորություն				
1	Առաստաղի լուսատուի տեղադրում էկոնոմ լամպով 1*25	հատ	124	2,899	359,438
2	էլեկտրական անջատիչ միաստեղ միաբևեռ	հատ	18	0,873	15,711
3	էլեկտրական անջատիչ երկստեղ միաբևեռ	հատ	5	1,007	5,036
4	Երկբևեռ վարդակ ՍH~220Վ,IgnՑ=6Ա	հատ	36	0,722	25,988
5	Տուփ բաժանարար	100հտ	0,94	79,202	74,450
6	Տուփ վարդակների և անջատիչների	100հտ	0,84	75,004	63,003
7	Հաղորդալարի անցկացում ՊՎՔ 2*2.5մմԱ	100 մ	11,5	30,791	354,096
8	Հաղորդալարի անցկացում ՊՎՔ 3*2.5մմԱ	100 մ	1,8	42,462	76,431
9	Խմբային վահան /պլաստմասե արկղ/ 12 տեղանոց	հտ	3	3,839	11,518
10	Եռաբևեռ ավտոմատ անջատիչ 25Ա	հտ	3	3,113	9,338
11	Միաբևեռ ավտոմատ անջատիչ 10 Ա	հատ	6	2,063	12,379
12	Միաբևեռ ավտոմատ անջատիչ 16 Ա	հատ	3	2,063	6,189
13	Դիֆերենց հոսանքի անջատիչ 16Ա	հատ	4	2,623	10,493
14	Մալուխի անցկացում 3*4մմԱ ՎՎԳ	100մ	0,92	89,887	82,696
15	Ակոսների փորում 25*20	100մ	13,3	23,086	307,038
16	Ակոսագծերի գաջի սավաղում	100մ2	0,33	160,136	52,845
	Ընդամենը				20395,000
	ԱԱՀ 20%				4079,000
	Ընդամենը				24474,000

* Կապալառուն աշխատանքները կատարում էք. Դիլիջան, Գետափնյա 70/4 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դիլիջանի համայնքապետարան
ք.Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՀ ֆինանսների նախարարության Գործառնական վարչություն
Հ/Հ ՀՀ900402081013
ՀՎՀՀ `07618909
Համայնքի ղեկավար__________Ա. Սանթրոսյան

ԿԱՊԱԼԱՌՈՒ

,,Ռ.Հովհաննիսյան,, ՍՊԸ
ք.Վանաձոր Կ.Դեմիրճյան 1գ
,Ինեկոբանկ,Վանաձոր մ/ճ
Հ/Հ 2050222083701001
ՀՎՀՀ 06940332
Տնօրեն __________Ռ.Հովհաննիսյան

Հավելված թիվ 1
« 18 » 07 2019թ. կնքված
ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-19/9 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի թիվ 2 մանկապարտեզի վերանորոգման

հ/հ	Անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը	Արժեքը
				Հազ.դրամ	
1	2	3	4	5	6
	1,Քանդման աշխատանքներ				
1	Փայտե պատուհանների քանդում /պատուհանագոգերի հետ միասին/	100 մ2	3,479	150,782	524,571
2	Փայտե դռների քանդում	100 մ2	0,75	87,937	65,953
3	Պաստառների պոկում պատերից	100 մ2	0,68	13,793	9,379
4	Պատերի փայտե վահանների քանդում	100 մ2	0,18	30,592	5,507
5	Պատի և առաստաղի մաքրում հին ներկից /յուղաներկ և սոսնձաներկ/	100 մ2	17,967	11,821	212,384
6	Գոյ. ունեցող միջնորմների քանդում	100 մ2	0,05	61,391	3,070
7	Առաստաղի գաջի սավաղի քանդում	100 մ2	0,48	76,311	36,630
8	Պատերի գաջի սավաղի քանդում	100 մ2	1,2	70,326	84,392
9	Կերամիկական սալիկների քանդում	մ2	105,6	0,449	47,403
10	Պատերի ց/ավազային սավաղի քանդում	100 մ2	1,056	70,326	74,265
11	Լինոլիումե հատակների քանդում	մ2	289	0,339	98,019
12	Կերամիկական սալիկ.հատակ.քանդում	100 մ2	1,051	32,221	33,865
13	Ց/ավազային հարթեցուցիչ շերտի քանդում	100 մ2	2,625	26,975	70,810
14	Շին.աղբի,հավաքում,տեղափոխում և բարձում ինքնաթին.	տն	18,51	0,344	6,370
15	Շին.աղբի Տեղափոխում 5կմ	տն	18,51	1,197	22,163
	2,Բացվածքներ				
1	Ալյումինե դռան տեղադրում 60 մմ հաստ (օտարերկրյա. պրոֆիլ, սպիտակ գույն) թերմոկամուրջով	մ2	2,88	56,673	163,217
2	Մետաղապլաստե դռան տեղադրում 60 մմ հաստ (հայկ. պրոֆիլ, սպիտակ գույն)	մ2	75,1	27,301	2050,270
3	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում /բացվող/ (հայկ.պրոֆիլ,սպիտակ) 60 մմ հաստ4+4 մմ	մ2	166,8	20,476	3415,368
4	Մետաղապլաստե պատուհանների տեղադ- րում /չբացվող/ (հայկ.պրոֆիլ,սպիտակ) 60 մմ հաստ4+4 մմ	մ2	181,1	13,415	2429,407
5	Մետաղապլաստե պատուհանագոգերի տեղադրում	մ2	52,8	2,225	117,454
6	Մետաղապլաստե պատուհանագոգերի արժեք /30սմ լայնութ./	գմ	176	2,188	385,173
7	Պատերի շարվածք կանոնավոր ձևի տուֆ քարով սյուներ	մ3	6,4	14,098	90,225
8	Բացվածքների ամրանավորում Ա-1	տն	0,0768	299,366	22,991
9	Խարիսխի տեղադրում անցքերում / Ա-2/	տն	0,018	306,392	5,515
	3,Միջնորմներ /առաջին հարկ/				
1	Միջնորմների կառուցում 10 սմ հաստ.պեմզաբլոկից	մ3	1,5	19,342	29,014
2	Միջնորմների ամրանավորում Ա-1	տն	0,011	299,364	3,293
	4,Հարդարման աշխատանքներ /առաջին հարկ/				
1	Կախովի առաստաղի իրականացում հիմնակմախքով,պլաստմասե /գունավոր / մետաղական պրոֆիլների վրա	մ2	12,2	2,501	30,510
2	Պատի գաջի սվաղի նորոգում բարելավված որակի մինչև 10 մ քառ	100 մ2	1,234	176,606	217,932
3	Պատերի սվաղում գաջի շաղախով բարելավված որակի	100 մ2	1,2	155,360	186,432
4	Առաստաղի գաջի սվաղի նորոգում բարելավված որակի մինչև 10 մ քառ	100 մ2	0,683	295,388	201,750
5	Առաստաղի սվաղում գաջի շաղախով բարելավված որակի	100 մ2	0,58	185,474	107,575
6	Առաստաղների ներկում լատեքսով բարելավված որակի	100 մ2	4,326	84,581	365,896
7	Շեպերի սվաղում գաջի շաղախով	100 մ2	0,661	378,247	250,021
8	Պատերի սվաղում ց/ավազային շաղախով	100մ2	0,533	114,012	60,768
9	Պատերի երեսապատում հախճասալով 200*300 իրան	100մ2	0,533	451,723	240,768
10	Պատերի և շեպերի յուղաներկում	100մ2	4,171	78,365	326,860
11	Պատերի ներկում լատեքսով բարելված որակի/super -L ՇԵՆ/	100 մ2	3,687	75,143	277,053
12	Պատի պաստառի իրականացում / գույնը և տեսքը համաձայնեցնել տնօրինության հետ/	100 մ2	0,68	153,169	104,155
	5,Հարդարման աշխատանքներ /երկրորդ հարկ/				
1	Կախովի առաստաղի իրականացում հիմնակմախքով,պլաստմասե /գունավոր / մետաղական պրոֆիլների վրա	մ2	25,4	2,501	63,522
2	Պատի գաջի սվաղի նորոգում բարելավված որակի մինչև 10 մ քառ	100 մ2	1,632	176,606	288,222
3	Պատերի սվաղում գաջի շաղախով բարելավված որակի	100 մ2	1,092	155,360	169,653
4	Առաստաղի գաջի սվաղի նորոգումբարելավված որակի մինչև 10 մ քառ	100 մ2	0,744	295,388	219,769
5	Առաստաղի սվաղում գաջի շաղախով բարելավված որակի	100 մ2	0,58	185,474	107,575

	Առաստաղների ներկում լատեքսով բարելաված որակի	100 մ2	4,166	84,581	352,363
	Շեպերի սվաղում գաջի շաղախով	100 մ2	0,82	378,247	310,162
	Պատերի սվաղում ց/ավազային շաղախով	100մ2	0,526	114,012	59,970
9	Պատերի երեսապատում հախճասալով200*300 իրան	100մ2	0,526	451,723	237,606
10	Պատերի և շեպերի յուղաներկում	100մ2	3,86	78,365	302,488
11	Պատերի ներկում լատեքսով բարելաված որակի	100 մ2	3,188	75,143	239,557
12	Արտաքին պատուհանագոգերի արցուն քաքափրի տակ ց/ավազային սվաղ	100մ	1,76	43,289	76,189
13	Պատուհանագոգերի ծածկ ցինկապատ թիթեղից 0,55 մմ	100 մ2	0,352	253,459	89,218
14	Մետաղական դռների և կոնստրուկցիաների յուղաներկում/անցուղիներ/	100 մ2	0,352	78,380	27,590
15	Մետաղական բազրիքների յուղաներկում	100 մ2	0,32	78,380	25,081
16	Տանիքի թիթեղների վերանորոֆգում		26	3,384	87,983
	6,Հատակներ /առաջին հարկ/				
1	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ.	100 մ2	1,673	85,484	143,015
2	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 20մմ հաստ	100 մ2	0,274	61,618	16,883
3	Ջրամեկուսիչ շերտի իրականացումCR-68	մ2	27,4	4,341	118,947
4	Կերամիկական հատակների կառուցում	100 մ2	0,274	410,732	112,541
5	Լամինատե հատակների կառուցում - 8մմ արտասահմանյան, սպունգով, շրիշակով	մ2	290,4	3,340	970,040
6	Հատակների կառուցում սալիկներից /Պրեսգրանիտե սալ /400*400/սոսինձ-5 մմ	100 մ2	0,805	720,465	579,974
7	Մանրատախտակե հատակների վերանորոգում	մ2	23,2	7,775	180,382
8	Պրեսգրանիտե շրիշակների կառուցում H=10սմ սոսինձի վրա	100մ2	0,078	758,985	59,201
	7,Հատակներ /երկրորդ հարկ/				
1	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ.	100 մ2	0,951	85,484	81,296
2	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 20մմ հաստ	100 մ2	0,357	61,618	21,998
3	Ջրամեկուսիչ շերտի իրականացումCR-68	մ2	35,7	4,341	154,978
4	Կերամիկական հատակների կառուցում	100 մ2	0,357	410,732	146,631
5	Լամինատե հատակների կառուցում - 8մմ արտասահմանյան , սպունգով, շրիշակով	մ2	394,8	3,340	1318,774
6	Մանրատախտակե հատակների վերանորոգում	մ2	33	7,775	256,578
	8.Ջրագծի ներքին տեղամաս				
1	Լվացարանների ապամոնտաժում	100հտ	0,15	37,009	5,551
2	Զուքարակոնքերի ապամոնտաժում	100հտ	0,15	45,787	6,868
3	Մանկական լվացարանի տեղադրում	կ-տ	15,0	12,357	185,352
4	Մանկական զուքարանակոնքի տեղադրում	կ-տ	15,0	43,731	655,968
5	ճկախողովակ սիֆոնով d=50 մմ	հատ	15,0	0,871	13,065
6	ճկախողովակ d=100 մմ	հատ	15,0	1,356	20,334
7	Ալյումինե մարտկոցների տեղադրում	էկմ	8,5	0,494	4,197
8	H=500 մմ - 147 կկալ/ժամ	սեկց.	24,0	3,361	80,666
	9.Ներքին լուսավորություն			0,000	0,000
1	Լյումենեսցենտային լուսատուի տեղադրում ԼՊՕ - 2*36	հատ	16,0	3,780	60,486
2	էլեկտրական անջատիչ միաստեղ միաբևեռ	հատ	4,0	0,881	3,523
3	Տուփ բաժանարար	100հտ	0,04	79,921	3,197
4	Տուփ վարդակների և անջատիչների	100հտ	0,12	75,685	9,082
5	Հաղորդալարի անցկացում ՊՎՔ 2*2.5մմ²	100 մ	1,48	31,071	45,985
6	Երկբևեռ վարդակ UH~220Վ,Iуст=10Ա	հատ	8,0	0,764	6,112
	Ընդամենը				20295,000
	ԱԱՀ 20%				4059,000
	Ընդամենը				24354,000

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Դիլիջան, Գայի 41 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դիլիջանի համայնքապետարան
ք.Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՀ ֆինանսների նախարարության Գանձարանական վարչություն
Հ/Հ ՀՀ900402081013
ՀՎՀՀ `07618909

Համայնքի ղեկավար _____ Ա. Մանթրոսյան

ԿԱՊԱԼԱՌՈՒ

,,Ռ.Հովհաննիսյան,, ՍՊԸ
ք.Վանաձոր Կ.Դեմիրճյան 1գ
Ինեկոբանկ,Վանաձոր մ/ճ
Հ/Հ 2050222083701001
ՀՎՀՀ 06940332

Տնօրեն _____ Ռ.Հովհաննիսյան

Հավելված թիվ 2
«18»07 2019թ. կնքված
ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-19/9 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆԳՐԱՖԻԿ

«ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԵՎ «ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ»-Ի ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	**«ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԵՎ «ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ»-Ի ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ»**	18.07.2019թ.	01.11.2019թ.
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դիլիջանի համայնքապետարան
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402081013
ՀՀ ֆինանսների նախարարության
Գործառնական վարչություն
Համայնքի ղեկավար Ա. Սանթրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

,,Ռ. Հովհաննիսյան,, ՍՊԸ
ք.ՎանաձորԿ.Դեմիրճյան 1գ
Հ/Հ 2050222083701001
ՀՎՀՀ 06940332
«Ինեկոբանկ,Վանաձորմ/ճ

Տնօրեն Ռ. Հովհանիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«18»07 2019թ. կնքված
ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-19/9 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	4546100	***«Դիլիջան համայնքի «Թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի վերանորոգում»***	0	0	0	0	0	0	4894800	11013300	24474000	24474000	24474000	24474000	**24474000**
2	4546100	***«Դիլիջան համայնքի «Թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ»-ի վերանորոգում»***	0	0	0	0	0	0	4870800	10959300	24354000	24354000	24354000	24354000	**24354000**

** Վճարմանենթակագումարներըներկայացվում են աճողականկարգով*
**** Վճարման ենթակա գումարի 55% կատարվում է պետական բյուջեից, 45 %համայնքային բյուջեից:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դիլիջանի համայնքապետարան
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402081013
ՀՀ ֆինանսների նախարարության
Գործառնական վարչություն
Համայնքի ղեկավար Ա. Նանթրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

,,Ռ. Հովհաննիսյան,, ՍՊԸ
ք.ՎանաձորԿ.Դեմիրճյան 1գ
Հ/Հ 2050222083701001
ՀՎՀՀ 06940332
«Ինեկոբանկ,Վանաձորմ/ճ

Տնօրեն Ռ. Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
«» 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրիկողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելուվայրը _____	գտնվելուվայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«» 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ_____-ի(այսուհետ՝ Պատվիրատու) և_____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց **Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____ _____
ազգանուն, անուն ազգանուն, անուն

_____ _____
ստորագրություն ստորագրություն